

**Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի
2015թ. նիստերի արձանագրություններ**

Արձանագրություն 9

2015թ. հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 29-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Հ.Զաքոյան/

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Հ.Ղուլոյան/

3.ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկ՝ ԱՔՎ պետ Ա.Ղարիբյան/

4.ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկ՝ բաժնի վարիչ Պ. Մուրադյան/

5.ԳՊՀ խորհրդի կազմում պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների ընտրության հարցը:

/զեկ՝ ռեկտոր Ռ.Հակոբյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց ամբիոնի վարիչ Հ.Զաքոյանը: Նա եղած խնդիրները պայմանավորեց հանրապետական և համաբուհական ստեղծված իրավիճակով: Բուհական կրթությունը հիմնված է քանակի վրա, անտեսվում է որակը: Խոսելով առաջադիմության մասին՝ զեկուցողը նշեց, որ առաջադիմությունը քանակապես տարբեր կուրսերում առաջադիմությունն էլ տարբեր է, իսկ ընդհանրապես առաջադիմության անկում կա: Կարևորվեցին

մասնագիտական գրականության, տեխնիցոցների, ճիշտ կազմակերպված պրակտիկայի հետ կապված հարցերը: Ֆակուլտետում ասպիրանտական կրթության կազմակերպումը այլ մոտեցումներ է պահանջում նոր առարկաների ներգրավման, կրթական ու ասպիրանտական ծրագրերի ստեղծման առումով: Հ. Զաքոյանը ներկայացրեց նաև ամբիոնի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

Հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ.Ղուկոյանը ներկայացրեց ամբիոնի 2014-2015 ուստարվա հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը: Զեկուցողն անդրադարձավ ուսանողական համակազմի, առաջադիմության, ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցերին, կարևորեց մագիստրոսական թեզերի թեմաների արդիականության հանգամանքը: Նա նաև նշեց, որ ամբիոնում մշտապես վերանայվում ու թարմացվում են առարկայական ծրագրերը, համալրվում են դասախոսությունների էլեկտրոնային տիրույթները: Կրթության որակի բարձրացումը, ըստ զեկուցողի, կապված է նաև արտաքին կապերի ընդլայնման հետ: Այնուհետև ներկայացվեց ամբիոնի զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները ներկայացրեց Ա.Ղարիբյանը: Նա ասաց, որ վարչության աշխատանքները բազմաբնույթ են և վերաբերում են համալսարանի գործունեության տարբեր ոլորտների՝ սկսած ընդունելություններից վերջացրած ամփոփիչ ատեստավորման քննություններով: Անդրադարձ կատարվեց ուսանողների շարժունակությանը, այլ բուհերից ԳՊՀ և ներբուհական տեղափոխություններին, ուսանողների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման հարցերին, տեղեկություններ տրվեցին բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների քանակի մասին առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Ա. Ղարիբյանը համալսարանի բնականոն գործունեության ցուցիչ համարեց տարբեր

կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքումը, պրակտիկաների անցկացումը դպրոցներում և այլ հիմնարկներում, համալսարան-դպրոց կապը և փոխայցելություններն ու ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը դպրոցականների և քոլեջների սովորողների միջև: Արդյունավետ են եղել որակի ապահովման բաժնի աշխատանքները. վերանայվել են կանոնակարգեր, ուսանողության շրջանում անցկացվել են հարցումներ: Կարևորվեց ԳՊՀ մասնակցությունը միջազգային ծրագրերին: Ի վերջո, պատշաճ մակարդակով են կազմակերպվել և անցկացվել ն՛ կիսամյակային քննաշրջանները և՛ ամփոփիչ ատեստավորման քննությունները: Այնուհետև Ա.Ղարիբյանը հանգամանորեն ներկայացրեց ԱԲՎ զարգացման հիմնական ուղղությունները:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի 2014-2015 ուստարվա

գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները ներկայացրեց Պ.Մուրադյանը: Նա նշեց, որ լրացել է բաժնի 5-ամյակը: Բաժինը լայնածավալ աշխատանքներ է տարել լի շարք կարևոր ուղղություններով. հասարակության հետ կապերի ամրապնդում, դիմորդների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներ, կայքի տեղեկատվական բազայի համալրում, համացանցում ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում և այլն: Բաժինը համագործակցում է թեմի առաջնորդարանի, դպրոցների, գրադարանների, զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես «Գեղամա աշխարհ» մարզային թերթի և «Գեղամա» հեռուստաընկերության հետ: Բավական արդյունավետ աշխատանքներ են տարվում հիմնադրամների և ԳՊՀ կրթաթոշակառուների հետ: Զեկուցողը անդրադարձավ նաև այն թերություններին, որոնք պայմանավորված են եղել օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Ներկայացվեց բաժնի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, կարևորելով ԳՊՀ խորհրդի դերը համալսարանի կառավարման գործընթացում, ասաց, որ ԳՊՀ խորհուրդը նոր անդամներով համալրելու անհրաժեշտություն կա, և առաջարկեց համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմից առաջադրել ԳՊՀ խորհրդի կազմում ընդգրկվելիք անդամների թեկնածություններ:

Քննարկվող հարցերի շուրջ ելույթ ունեցան և թեկնածություններ առաջադրեցին գիտխորհրդի անդամները:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթները և առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

3. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

5. ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

6. Հաստատել ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության 2015-

2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

7. ա/ Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմից խորհրդի կազմում ընդգրկել հետևյալ թեկնածուներին.

Կուտուզյան Նելլի Ալբերտի - ֆիզմաթ գիտ.թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոռեկտոր

Առաքելյան Արա Հրաչիկի - բան.գիտ.դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր, դասախոս

Ասոյան Թաթուլ Արտիկի - բան.գիտ.թեկնածու, դոցենտ, ԲՖ դեկան

Հակոբյան Մամիկոն Զալիբեկի - տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ, դասախոս

Հարությունյան Հարություն Սարգսի - տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ, դասախոս

Ղարիբյան Ալինա Ամբիկի - ԱԲՎ պետ, դասախոս

բ/ Որոշումը ներկայացնել ՀՀ կրթության կառավարման լիազոր մարմնին:

Գիտխորհրդի նախագահ՝

Գիտքարտուղար՝

Ռ. Հակոբյան

Թ. Ասոյան